ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ կողմից 2017 թվականի դեկտեմբերի 20-ին 1-ին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-183-16.11.2017-ՊԻՄԻ-011/1, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Կ-183[1]-16.11.2017-ՊԻՄԻ-011/1, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Կ-183[2]-16.11.2017-ՊԻՄԻ-011/1 և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Կ-183[3]-16.11.2017-ՊԻՄԻ-011/1 ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
1.	**Հայաստանի Հանրապետության կառավարություն**	Նախագծերի փաթեթ	Առաջարկվում է հստակեցնել «ողջամտորեն ենթադրելի» ձևակերպումը:	Նախագծերի փաթեթում «ողջամտորեն ենթադրելի» ձևակերպումը փոխարինվել է «ողջամտորեն ենթադրում է» ձևակերպմամբ:	**Ընդունվել է:**
2.	**Հայաստանի Հանրապետության կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-183-16.11.2017-ՊԻՄԻ-011/1 հոդված 23	Առաջարկվում է սահմանել ձերբակալման բողոքարկման ավելի երկար ժամկետ:	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 23-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի Հոդված 289.1-րդ	**Ընդունվել է:**

				հոդվածի 3-րդ մասում Ձերբակալման դեմ բողոք բերելու ժամկետ է նախատեսվել մեկ ամիսը: Նախագծի 23-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի Հոդված 289.4-րդ հոդվածում հստակեցվել են բողոքը քննելու և որոշում կայացնելու ժամկետը, ինչպես նաև անազատության մեջ գտնվող անձի՝ ձերբակալման դեմ բերված բողոքի քննության առանձնահատկությունները:	
3.	**Հայաստանի Հանրապետության կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-183-16.11.2017-ՊԻՄԻ-011/1 հոդված 23	23-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի Հոդված 289.5-րդ հոդվածում հստակեցնել անձն անհապաղ ազատ արձակելու դեպքերը:	Նախագծի 23-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի Հոդված 289.5-րդ հոդվածում ամրագրվել է անձին անհապաղ ազատ արձակելու երկու դեպք. 1. եթե առկա է անձի կյանքին սպառնացող վտանգ և չի հիմնավորվել այդ վտանգը չեզոքացնելու	**Ընդունվել է:**

				հնարավորությունը. 2. եթե դատարանը հաստատում է ձերբակալման ոչ իրավաչափ լինելու փաստը, բացառությամբ այն դեպքի, երբ ձերբակալման դեմ բողոքը քննվել է կալանքի միջնորդության հետ միաժամանակ և միջնորդությունը բավարարվել է:	
4.	**Պատգամավոր Արփինե Հովհաննիսյան**	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-183-16.11.2017-ՊԻՄԻ-011/1 հոդված 6-ի 2-րդ մաս	Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունը սահմանում է, որ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին **անհապաղ տեղեկացվի** իր ընտրած անձը, այսինքն՝ կամ անձն ինքն անձամբ է տեղեկացնում, կամ վարույթն իրականացնող մարմինը, մինչդեռ նախագծով առաջարկվող կարգավորումը կարծես թե նախատեսում է բացառապես վարույթն իրականացնող մարմնի կողմից տեղեկացնելու ընթացակարգ:	**Ընդունվել է.** Նախագծի հիշյալ դրույթը համապատասխանեցվել է Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությանը:	**Ընդունվել է.**
5.	**Պատգամավոր Արփինե Հովհաննիսյան**	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության	Չնայած նախագծով առաջարկվում է սահմանել, որ արձանագրությունը երեք ժամում կազմելուց հետո այն 1 ժամվա ընթացքում պետք է	**Ընդունվել է.** Նախագծի հիշյալ դրույթում կատարվել է համապատասխան	**Ընդունվել է.**

		օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-183-16.11.2017-ՊԻՄԻ-011/1 հոդված 12-ով Օրենսգրքի 129-րդ հոդվածում լրացվող 3-րդ մաս	հանձնվի անձին, այդուհանդերձ քննարկվող մասով սահմանված իրավունքներից անձը պետք է օգտվի արգելանքի վերցնելուց հետո 4 ժամվա ընթացքում: Դրանից հետո անկախ արձանագրությունը հանձնելու կամ չհանձնելու հանգամանքից՝ վերջինս պետք է ձեռք բերի կասկածյալի բոլոր իրավունքները: Դա Գագիկ Միքայելյանի գործով Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումն է: Նույն գաղափարը զարգացված է նաև քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (պարզապես նախագծում ժամկետային ինտերվալը 6 ժամ է):	լրացում:	
6.	**Պատգամավոր Արփինե Հովհաննիսյան**	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-183-16.11.2017-ՊԻՄԻ-011/1 հոդված 23	23-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի Հոդված 289.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի միջև հակասություն կա այն առումով, որ ազատ արձակվելու հետո 10-օր հետո անձը կարող է կասկածյալի կարգավիճակ չունենալ, լինել մեղադրյալ կամ առահասարակ որևէ դատավարական կարգավիճակ չունենալ, օրինակ՝ անձը ներգրավվել է որպես մեղադրյալ, սակայն կալանքի միջնորդություն չի էլ ներկայացվել:	**Ընդունվել է.** 23-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի Հոդված 289.1-րդ հոդվածի 2-րդ մասից «կասկածյալ» բառը հանվել է: Հարկ է նշել, որ արգելանքի վերցրած անձ ասելով հասկանում ենք այն անձին, որը վերաբերելի ժամանակահատվածում արգելանքի է վերցվել և բոլորովին նշանակություն չունի նրա հետագա դատավարական կարգավիճակը:	**Ընդունվել է.**

7.	**Պատգամավոր Արփինե Հովհաննիսյան**	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-183-16.11.2017-ՊԻՄԻ-011/1 հոդված 23	23-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի Հոդված 289.3-րդ հոդվածի 1-ին մասում հղում է կատարվում 289.2-րդ հոդվածին: 289.2-րդ հոդվածում նշված բոլոր սխալներն էլ ըստ էության կարող են շտկվել: Անհրաժեշտ է հստակ սահմանել, թե որ դեպքերում բողոք կարող է վերադարձվել՝ այդպիսիք սահմանափակելով միայն ձևական հիմքերով:	**Ընդունվել է.** Հիշյալ դրույթը հստակեցվել է:	**Ընդունվել է.**
8.	**Պատգամավոր Արփինե Հովհաննիսյան**	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-183-16.11.2017-ՊԻՄԻ-011/1 հոդված 23	23-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի Հոդված 289.4-րդ հոդվածի 7-րդ մասում նախատեսված «ակտը» տերմինը նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծի տերմինաբանության ենթադրում է և որոշում և գործողություն, այնինչ գործող օրենսգրքում այդ տերմինը չկա և ակտը հասկացվում է առավելապես որպես որոշում:	**Ընդունվել է.** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է.**
9.	**Պատգամավոր Արփինե Հովհաննիսյան**	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-183-16.11.2017-ՊԻՄԻ-011/1 հոդված 23	23-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի Հոդված 289.5-րդ հոդվածի 5-րդ մասում նշված է «ձերբակալված անձ», մինչդեռ բողոքարկման փուլում կարող ենք գործ ունենալ արդեն մեղադրյալի հետ:	**Ընդունվել է.** Նախագծի հիշյալ հոդվածում «ձերբակալված անձ» հասկացությունը փոխարինվել է «արգելանքի վերցված անձ» հասկացությամբ: Բացի այդ հարկ է նշել, որ հիշյալ հոդվածում խոսքը վերաբերում է վերաբերելի ժամանակահատվածում արգելանքի	**Ընդունվել է.**

				վերցված կամ ձերբակալված անձին:	
10.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-183-16.11.2017-ՊԻՄԻ-011/1 հոդված 6-ի 1-ին մաս	Նախատեսել, որ ձերբակալվելուց հետո անհապաղ անձն իրավունք ունի ստանալ նաև իրեն ազատությունից զրկելու հիմքերի մասին գրավոր ծանուցում և պարզաբանում:	**Ընդունվել է.** Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	**Ընդունվել է.**
11.	**Պատգամավոր Անդրանիկ Հարությունյան**	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-183-16.11.2017-ՊԻՄԻ-011/1 հոդված 23	23-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի Հոդված 289.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում լրացնել նաև բողոքը դատարանին ներկայացնելու ժամը:	**Ընդունվել է.** Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	**Ընդունվել է.**